

մասնաւորապես հյուսվածության որոշ առաջարկություն առ այս առաջա-

ՄԱՏԵՆԱԽՈՍԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԾՍԻՐԱԽԹԻԻՆ

Հայկական բանասիրութիւնը իրաւ է շատ դանդաղ, բայց հաստատուն և դրական քայլերով առաջ է ընթա-

նում նպաստելով պատմական, գրական և լեզուարտ-

նական բաղմաթիւ լմոցիրների պարզաբանելուն: Եւ այս

դեպքում Հայերից պակաս չեն աշխատում օտարազգի

ուսումնականները: Եթէ մի տեսակ սահմանադրար ընդու-

նենք այն համառօտ տեսութիւնը, որ 1890 թուին տուեց

վաղամեռ Շռումպֆ եւրոպացի ուսումնականը՝ Հայագի-
տուրեան ուսումնասիրութիւնը Եւրոպայում, որ պարու-
նակում է համառօտ պատմութիւն եւրոպացի ուսումնա-
կանների կատարած դերի հայագիտութեան մէջ և միջոց

տալիս հետաքրքրուողներին տեղեկանալու թէ ինչ են կա-
տարել այլ և այլ յայտնի և հոչակ ստացած հայագէտներ—
մի աշխատանք, որի հմանը հայ մամնագէտների վերտքեր-
մամբ չկայ կատարուած, — և փորձենք տեսնելու թէ այ-
նուհետեւ, այս վերջի տամնամետակում, ինչ է կատարուել
հայ բանասիրութեան համար, կարող ենք մատնանիշ տ-
նել մի քանի գրական արդիւնքների վրայ:

Շռումպֆի կատարածից աւելի լայն ծրագրով հան-
գուցեալ Ս. վ. Պարսնեանն էր հետամուտ մանրամասն
ի մի հաւաքել ինչ որ առաջ և իւր օրով դրուել և գըր-
ւում է Հայկական պատմական-գրական կեանքի համար-
կը հրատարակուի արգեւք այդ աշխատութիւնը, թէ ուրիշ
լաւ ոկտուածքների մէս ձեռագիր մնալով, ձեռքէ-ձեռք կանց-
նի և նրա տարիների քրտնաշան աշխատանքը կըկորչի ան-
հետ, դժուար է գուշակել: Ժամանակն ընթանում է նո-

բանոր պահանջներով և անկարուռատ է մուռմ միայն դրահ կան ի կատար ածած գործը:

Այդ մասելով, որոշեցինք ապագրել մեր ձեռքի տակ անցնող, ոսումնական արժեք ունեցող աշխատաւթիւնների մասին համառօտ տեղեկութիւններ, որ եթէ հնար լինի շարունակել, իւր ամբողջութեամբ, անկառկած, կունենայ յայտնի օգուտներ։ Մենք սրանով սրոշ խոստում չենք անում, որ կապարելը այնքան էլ հեշտ չի լինում, թէ անձնական և թէ ուրիշ հանդամանքների շնորհիւ։ Մեր ապագրածը համեմատ է լինելու խորագրութեան և դրան կարող են մասնակցել շատ շատերը, մասնաւնդարասահմանում առաջ հայ ուսանողներ, որովհետեւ մենք միշտ հնարաւորութիւն չենք աւնենալ տեղեկանալ, թէ այնուեղ ինչ է գրում մեր պատմոթեան և գրականութեան մասին։ Հարկաւ, մենք չենք ստհմանափակուի միայն օտարազգիների գրաւածքներով։

V. Родицикавъ. Къ сказанию о сношенияхъ Эдесского князя Аагара со Христомъ Спасителемъ (Груды Киевской духовной Академіи, 1903, Июль, стр. 504—513).—Рођениկимъ, Եղիսիայի Արքար իշխանի Յիսուս Քրիստոսի հետ ունեցած յարագերութեան մասին գրուածքի առթիւ։ Այդ յոդուածը մենք չենք կարդացել, այլ նրա մասին գոտիք մի փոքրիկ գրախօսական «Բիզնուգակական ժամանակադիր» ամսաթերթում (Бизантійскій Временникъ, т. X, 1903, стр. 229, 230) և ուշագրութիւն գրաքրինք նրա վրայ, որովհետեւ յոդուածադիրը հրապարակ է եկել հերքելու վերջի տարիներու «Արքարի դրայցի» մասին յայտնուած կարծիքները։ Հայ ընթերցողին բու ձանօթէ է Դերրաւայ Ասորու թօւզիւը, թէ Մագիս Խօրենացու պատմութիւնից և թէ իրեն՝ Դերրաւայի ընագրի հայերէն թարգմանութեան երեսն գարաց և հրատարակուելուց յետոյ։ Այդ թղթի մէջ Դերրաւան պատմում է Արքար թագաւորի ծանր հիւանդութեան բժշկութիւնը և Եղիսիայի քրիստոնեաց անդրանիկ եկեղեցաւ հաստատութիւնը։ Եւ-

րոպացի մի շարք ուսումնականներ, մանաւանդ՝ Ղերութնայի գրուածքի ասորերէն ընագրի գիւտից յետոյ, բազմակողմանի կերպավ ուսումնասիրել են այդ գրուածքը և ընդհանրապէս այն եղբակացութեան եկել, որ Արքարի յարաբերութիւնը Փրկչի հետ չունի պատմական ճշմարտութիւն և որ մինչև անգամ ամբողջ գրուածքը, ոչ թէ փրկչական առաջին, այլ երկրորդ երրորդ գարու գործ է։ Նոյն մտքով նորերս մի յօդուած է գրել գերմանացի Շլվարց ուսումնականը (Zeitschrift für neutestamentliche Wissenschaft, 1903, № 1, p. 6166), որի գէմ և ռուս յօդուածագիրը պաշտպանում է Ղերութնայի գրուածքի վաւերականութիւնը, հաստատելով որ Արքար թագաւորը իսկապէս նամակ է գրել Փրկչին, դեսպաններ ուղարկել և Տիրոջից ընդունել անձեռագործ գաստառակը։ Ինչպէս քըննադատը վկայում է, ալ. Ռոդնիկովը յենւում է արգէն քաջածանօթ հեղինակների գրուածքների վրայ, Եւսեբիոս Կեսարացու, Եփրեմ Ասորու, Եւագրի, Մովսէս Խորենացու, Պրոկոպիոսի վրայ, հետեւապէս և նոր աղքիւր չունի։ Քանի որ բուն յօդուածը մեր աչքի առաջ չունինք, քըննադատն էլ յօդուածագրի պատճառաբանութեան մասին որոշ կարծիք չի յայտնում, մեզ համար մնում են թէական, թէ որքան հիմնաւոր են յօդուածների մտքերը և արդեւոք կարեսոր խնդրի առթիւ նոր ըան ունի ասած։

F. Macler, Moïse de Khoren et les travaux d'Auguste Carrière—Ֆ. Մակլեր, Մովսէս Խորենացի և Օդիւսոս Կարիերի աշխատութիւնները (Revue archéologique, 3 série, 41 (1902) p. 293—304)։ Թրանսխացի հայագէտ Կարիերը եւրոպացի մամնագէտների շրջանում և գլխաւորապէս հայերիս մէջ, անուն հանեց ոկատծ վերջին իննսուն թուականից, երբ ոկատց ուսումնասիրել Մովսէս Խորենացու պատմութիւնը և յատկապէս այդ գրուածքի ժամանակի խնդիրը։ Նրա պաշտպանած կարծիքները՝ թէ Խորենացին օդտուել է Փոքր կոչուած Սոլիատի պատմութիւնից և Մաղաղասի ժամանակագրութիւնից, ոչ միայն չհաս-

տատուեցին, այլ Սոկրատի վերաբերմամբ միանգամայն հերքուեցին։ Չնայած այդ հանգամանքին, հանդուցեալ հայագէտը մեծ ծառայութիւն է մատուցել Խորենացու ուսումնասիրութեանը։ Նրա յօդուածների յարուցած հետաքրքրութեան շնորհիւ, համարեա բոլոր հայագէտները աւելի կամ պակաս ուշագրութեամբ զբաղուեցին Խորենացու խնդրով և ստեղծուեց մի պատկառելի գրականութիւն։ Անկասկած այդ հանգամանքի շնորհիւն է, որ Կարիերի կենսագիր պ. Ֆ. Մակլերը իւր շարադրութեան խորագիրը նշանակել է՝ Մովսէս Խորենացի և Օգիւստ Կարիերի աշխատութիւնները։

H. F. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie (Revue de l'Orient Chrétien, 7 (1902) p. 277—302, 509—542) — Հայաստանի քաղաքական և կրօնական պատմութիւնը (B. Временникъ IX (1902) էջ 582)։ Յօդուած է արդեք, թէ յատուկ աշխատութիւն Հայաստանի կրօնական և քաղաքական անցեալի մասին, ոչինչ ասել չենք կարող, որովհետեւ ձեռքի տակ չունինք ոչ գրուածքը, ոչ էլ յիշատակութիւն՝ բովանդակութեան մասին։

Fr. Maria Esteves Pereira, Vida de S. Gregorio, patriarcha da Armenia. Conversão dos Armenios ao christianismo. Versão ethiopica (1902 (?)) 42 երես ընդամենը ?) — Ֆր. Մարիա Էստեվես Պերեյրա, Ա. Գրիգորի, Հայոց պատրիարքի վարքը. Հայերի քրիստոնէութիւն ընդունելը. Եթովպերէնից թարգմանած։ Հեղինակը, պորտուգալցի, քննում է հայերի քրիստոնէութիւն ընդունելը, հիմնուելով գլխաւորապէս Աղաթանգեղոսի պատմութեան վրայ և ապա երկու ձեռագրից, մէկը Բերլինում, միւսը Բրիտանիան մուգէում, արտատպում է Եթովպերէն ընագիրը և սրա հետ տալիս պորտուգալարէն թարգմանութիւնը։ Հայ ընթերցողը գիտէ անշուշտ, որ Լուսաւորիչը սրբոց կարգն է գասուած՝ թէ օրթոդոքս, թէ լատին և թէ ուրիշ հին եկեղեցիներում։ Նրա վարքը վաղուց ծանօթ և

քանիցս հրատարակուած է յօյն և լատին լեզուներով։ Անցեալ, 1902 թ., պր. Մառը Սիսայի վանքում գտաւ Աղաթանգեղոսի պատմութեան, կամ Լուսուորչի վարքի արարերէն բնագիրը ևս, որ խոստանում է մեծ զար սփռել պատմութեան հայերէն բնագրի վրայ։ Ներկայումս ո. Եջմիածնում կատարւում է մի լուրջ աշխատութիւն։ Գալուստ սարկաւագը և Ստ. Կանայեանը ամիսներից ի վեր բաղդատում են Մայր Աթոռի մատենագարանի Ագաթանգեղոսի բազմաթիւ ձեռագրերը և այժմ ձեռնամուխ են հրատարակութեան համար բնագիր պատրաստելու։ Կան խում ենք յայտնելու, որ ստացուած բնագիրը ըստ ամենայնի գոհացուցիչ և խոստանում է եղածի բազմաթիւ թերութիւնները լրացնելու։ Պէտք է հաւատալ, որ կատարուած աշխատութիւններից յետոյ կրգանուի մէկը, որ իրեն նպատակ կընտրի մանրամասն ուսումնասիրել Լուսուորչի կերոնքը, օժանդակ առնելով համաշխարհային քրիստոնեայ գրականութեան ազրի բները։

Христофоръ Күнукъ-Іоаннесօսъ, Паскою императора Иоанна Пимисхія къ армянскому царю Ашоту III (Византійскій Временникъ т. X 1903 стр. 91—101) — Յովհաննէս Զմշկիկ կայսեր թուղթը հայոց Աշոտ Գ. թագաւորին։ Սաթարդմանութիւն է Մատթէոս Ուռհայեցու պատմութեան մէջ եղող թղթին, որից ժամանակին ուռներէն լեզուով քազուածքներ է աշել պա։ Ե. Մառը իւր «Сказание о католикосѣ Петре и ученикомъ Иоанне Бозарти» СПБ, 1895, խիկ ամրողական թարգմանութիւնը վազուց յայտնի էր եւրապացիներին Սէն Մարտէնի, Դիւլորիէյի և Ծլումբերգէրի (У́эрорéе Buzantine à la fin du deuxième siècle) աշխատութիւններից։ Պ. Յովհաննիսինը մի փոքրիկ յառաջնարանից յետոյ, նույիրուած նախընթաց հրատարակութիւններին, ուռներէն լեզուով տալիս է տմբողջ թարգմանութիւնը, բնագիր բնդուներով Վաղարշապատի 1898 թ., հրատարակութիւնը։ Թարգմանութեան կցած են ընդարձակ ծանօթութիւններ։

Մ. Ջաջանի նկարագրում է 1903 թ. Տիֆան-
սկի Ալեքսանդր Խ, XI. դարու մի ձեռագիր, որի մէջ
կայ «Պисьмо царя Августа къ Сиасителю» (Յան. Времен.
X, стр. 340). Զետ. գտնվում է Թիֆլիզի եկեղեցական
թանգարանում, № 95։ Մեծագիր ձեռագրում կայ նաև
«Եռշամբիկ թագուհու վարքը, որ թաղուած է Թիֆլիզի
Մետեխի եկեղեցում» (եր. 735)։

Առերդոյ Ս. Աստուածածնի վանքը, որ այժմ կոչ-
ում է Յարերդ, գտնվում է Նարեկայ վանքի հանգէպ
մի ձորակի մէջ և մօտն ապրում են 8 տուն հայեր։ Վանքի
շենքը թէի փոքր, բայց բաւական շնորհքին է։ Վանքի մէջ
եղած ճաշոց ձեռագրում հետեւեալ յիշատակարանը կայ։
Եօս Տէր Յովհաննէս քահանայ, որ իմ օրդի Տէր Ղարդան
քահանային, որ էր վանից հայր Առքերդոյ վանից ո. Աս-
տուածածնին և ո. Յովհաննիսին և յետ մեռանելոյ հօրն
իմոյ ժառանգեցի զհայրենի աթոռն իմ զամս երեսուն
ի ՌՃՇԲ թվին, նոր նորոգեցի զվանքս որբատաչ քարամը
և զայս ճաշու գիրք և բան մաշխոց մի առեալ եղի
ի գուան մեր հայրենի վանից Առքերդոյ։ Եղն այս ի թվին
ՌՃՇԴ ի հայրապետութեան Տեսոն Գրիգորի կաթողի-
կոսի» (Աղթամարայ)։

Վանքում գտնվում են յիշեալ ճաշոցը և մի Աւե-
տարան մականուանեալ «Հրաշալի»։ Վանքի ասհմանների
մօտ կայ կալայապալոյ կոչուած աւերակ բերդը, որի մօտ
կան նաև ուրիշ աւերակներ, Մարդագելնոց, Պաղպատի
և Շմշեմայ անուններսվ։

Ս. Գէորգայ վանք Փուրկու, «Բազմաթիւ միաբան-
ներէ բազկացեալ ճոխ դպրեվանք մ'ունեցած է մե, ժշ
դպրերու մէջ, ինչպէս կըցուցնեն գըցագիր յիշատակարան-
ները, ըլլալով նուև իրրի ասիական ո. Բեռնարդոս մը,
որ յարդ թէ ամառն և թէ մանաւանդ. Ճենոքը կուրու-
տանին ամեն կարգի ճամբարդներ, այնպէս որ շատ ան-
գամ օրեկան 50-էն աւելի հաց ուտունես կըլլան հսնա-

Վանքը գտնվում է Վանի նահանգում, Եղերով լեռան
վրայ (Ուխտագնացութիւն և ուսումնասիրութիւն, Խաչիկ
Լեռնեան, Բիւզանդիոն, 1903, № 2, 148—2, 149).

Ստացուել են մասնագիտական կամ նոյնպիսի բնա-
ւորութիւն կրօղ աշխատութիւններ Մայր Աթոռի մատե-
նագարանի համար, որոնց մասին «Արարատ»-ի հետեւալ
համարներից մէկում աւելի մերձաւոր տեղեկութիւն կը
տրուի:

*Проф. Н. Марръ, Грамматика древне-армянского языка,
этимология. СПБ. 1903.*

—Тексты и Разысканія по армяно-грузинской филологии.
V. Критика и мелкія статьи. СПБ. 1903, 73 էջ:

—Арабское извлечение изъ спрійской хроники Марибаса.
СПБ. 1902, 14 էջ (*Տես Արարատ 1903, Փետրուար, էջ 235—241*):

—Предварительный отчетъ о работахъ на Синаѣ, веден-
ныхъ въ сотруднчествѣ съ И. А. Джваховимъ, и въ Йерусалимѣ,
въ поѣздку 1902 г. (апрѣль-ноябрь). СПБ. 1903, 51 էջ (Изъ
Сообщ. Импер. Прав. Палест. Общ. т. XIV, ч. II (1903 г.).

—*M. Джанашивили, Литература IX—X вѣковъ, Тифлісъ,
1891, стр. 118—196 (Учебная книга) (Отпись изъ IX тома.
№ 3 и 4 „Византійского Временника“, 1903 г.).*

—Къ столѣтію дня Рожденія М. И. Броссе. СПБ. 1902, 6 էջ:

A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'armé-
nien classique. Vienne, 1903. XX+116 էջ:

Թարու Վանեանեան, Ուկեղարեան հայերէնի խնդիրը (Ար-
տասպութիւն Հ. Ամսօրեայ թերթից), 30 էջ:

Հ. Գ. Գալեմշարեան, Ուկեղարեան և Ոչ-ուկեղարեան
հայերէնի խնդիրը (Արտասպած Հ. Ամսօրեայ թերթից), 58 էջ:

Архимандритъ Месропъ Теръ-Мовсесянъ, Раскопки раз-
валинъ церкви св. Григорія близъ Эчміадзана, СПБ. 1903, 48
էջ և լուսատիպ նկարներ մի տետրակ 20 լուսատիպ տախ-
տակներով: Մեր այս աշխատութիւնը Արտասպուած է „Извѣст.
Импер. Археол. Ком. выпускъ 7“.

Ն. Վ., Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունք,
Հուշի, 1903. 808 էջ:

Христофоръ Кучукъ-Гоаннесовъ, Письмо императора Иоанна Цимисхія къ армянскому парю Ашоту III. (*տես վերևէ էջ 90*):

Prof. Vetter, Die armenischen Apostelacten. II. Die Akten der Apostel Petrus und Paulus. Oriens Christianus, Roma 1903. 41 էջ:

B. Райтъ, Краткій Очеркъ Исторіи Сирійской Литературы. Переводъ съ англійскаго К. А. Тураевой, подъ редакціей и съ дополненіями проф. П. К. Коковцова. Съ приложениемъ обзора коллекціи пітрійскихъ рукописей британскаго музея и специальной карты. СПБ. 1903. XIII×294. Ընծան ուղարկել է աշխատութիւնը Խմբագրով պրոֆ. Պ. Կ. Կոկովցելը:

Г. Халатянъ, Армянские Аршакиды въ „Исторіи Армении“ Моисея Хоренского. Опытъ критики источниковъ. Часть I изслѣдованіе, II материалы, Москва, 1903. I—XVI+400+143.

—Ueber die armenische Version der Weltchronik des Hippolytus, էջ 5:

—War Artasches von Armenien der Besieger des Krôsus? 8 էջ:
Vorträge gehalten auf dem XIII intern. Orientalischen Kongresse zu Hamburg, 1902.

A. С. Хахановъ, Древнѣйшіе предѣли разселенія грузинъ по Малой Азіи, Тифлісъ, 1903 г. 70 էջ: (Записки Кавказскаго отдѣла Импер. Русск. Геогр. Общ. Книжка XXII, выпускъ 6-й).

Մերութ գարզական



ԱՅԼ, ԵՒ ԱՅԼ Ք

«Vossische Zeitung» Գերմանական թերթը մեջազդային վեճակագրական քերոյի տեղեկութիւնների վրայ հեմնուելով առաջ է քերում Տետևեալ վիճակագրական տեղեկութիւնները աշխարհիս բոլոր բնակիչների և աշխարհի առետրական ընդհանուր շարժման մասին: